

# Փ Ո Ւ Ն Ձ

## Օ Ր Ա Պ Ի Ր

Ամեն օր կհրատարակուի : — Հասար 40 փարայ է : — Պոլիս բաժանորդ ըլլալ ազոզը մէկ արժամք Մէճիս պիտի վճարէ 400 թուոց համար իսկ դատաւոց մէջ 25 դրչ, դարձեալ 400 թուոց համար, թղթաւարտ թեան ծախքէ ազտա ըլլալով : — Ծանուցման առջը 40 փարայ է մէկ անգամի համար : — Լրագրիս վերաբերեալ համակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է : Ղդիկ առ Տնօրէնն ի Ղարսիս Ս Լուսաւորիչ եկեղեցւոց վարի գրանք կից նոր Գրատունը :

### Ա Ձ Պ Ա Յ Ի Ն

Նախորդ ամսոյն վերջին կիրաւ կի օրը Գուղաւնձուգի եւ իճատիյէի միացեալ թաղին վարժարանին սրահին մէջ թաղական խորհրդոյն հրաւիրմամբ թաղային ընդհանուր ժողով դումարուելով, խորհուրդն իր 15 անուան հաշիւները ներկայացունելէն վերջը՝ հրաժարական տուեր է իննցունելով որ անձնական զբաղմանց պատճառաւ չկրնար այստե՛տեւ իր պաշտօնը շարունակ'լ : Արդանեան վեճ՝ Ստեփան պէյը, թաղական խորհրդակիանայ մին, աւելցուցեր է թէ « Բաղնահոգ զբաղմանց պատճառաւ էր որ չկրցանք ըստ արժանւոյն հոգ տանիլ վարժարանին, եւ ահա կհրաժարիմք սրպէս դի ընդդէմ մեր խղճին սյլ եւս երեսի վրայ չմնայ վարժարանը » : Ներկայ գտնուողներուն թախանձանքը չէ կրցեր համուել թաղական խորհրդոյ մեծապատիւ անդամները : Ուստի որոշուեր է խառն ժողովոյ խնայունել եւ խնդրել որ օր յառաջ ազգասիրաբար վաւթայ նոր խորհուրդ մ'ընարելու : Հրաժարեալ թաղական խորհուր-

դը մեծապէս արդիւնաւոր գտնուեր է եկեղեցւոյ անտեսութեան մասին եւ գրեթէ բոլորովին ազատեր է Գուղաւնձուգի եկեղեցին իր վրայ ծանրացած սարսքէն, որ շատ տարիէ ի վեր վարժարանին յետադիմութեան պատճառ եղած էր : Սոյոգ է որ վարժարանի մասին պէտք եղածն ընելով ժամանակ չէ ունեցեր, ինչպէս ինքն ալ խոստովանեցաւ, սակայն եւ այնպէս թաղեցւոց Հնորհակալութեան արժանի գործեր ըրեր է : Հրաժարեալ խորհրդոյն անդամներէն Ներսէսեան մեծապատիւ Գրիգոր է ֆէնտին՝ իր 4000 դուրուշ առնելիքը, նոյնպէս մեծապատիւ Մ. Մկրտիչ է ֆէնտի Չարիեան 600 դուրուշի դումար մը եկեղեցւոյն նախ'րեր է :

Վերջապէս՝ այս խորհուրդն իր պարտուց մեծ մասը կատարեր է արժանաւոր կերպիւ . եւ թերտ թեանցի համար ներողամտութիւն խնդրելով ամենայն իրաւունք ունի արդարանալու : Սակայն սցս առ թիւ պարտ է մեկ խոստովանիլ թէ թերտ թեանց պատճառը նոյն ինքն թաղեցիք կըրնան համարուիլ : Ս. յնախի թանգ մը, որ 200 նանակաւ հաղիւ 14 հոգի կը



հաւաքուի ընդհանուր ժողովի, կըրնայ բարեկարգ գւարոց ունենալ, և ի՞նչ իրաւունք ունի թաղական խորհրդոյ վրայ պակասութիւն գտնելու :

ԽՍՈՆ ԼՈՒՐՆԲ

Աթէնքէն կիմայնեն թէ Տաճկաստանի հեղինական նորընտիր գեւպան Պ. Ռանկատէ փարիզէն Աթէնք եկած ըլլալով՝ մօտ օրերս ճամբոյ պիտի ելնէ դէպ ի մայրաքաղաքս :

— Զորեքշարթի օրը կրեաէէն մայրաքաղաքս հասաւ իզգէտափն անուն կայսերական շոգենաւը, որուն մէջն էր Հաֆիզ փաշայի ընտանիքը :

— Անցեալ կինրակէ օրը Պուլկար Էպիսկոպոսները բարձ. մեծեպարքոսին ներկայանալով Պէպէք Նորին բարձրութեան ապարանքը, աղերսազկը մը մատուցել են, որով կը խնդրեն եղեր որ Պուլկար եկեղեցւոյն անկախութիւնը կայսերական հրովարտակաւ մը վաւերացուի :

— Արևնք թէ Պօրտօկն կառավարութեան գնած զբահաւոր նաւերուն մէկուն անունը ֆէլ և միւսին Կաթն է եղեր : Երեք ամէն ի վեր այս նաւերը ճամբոյ ելած ըլլալով՝ ճամբու վրայ քիչ մը վնասուած են եղեր . հետեւ բար սոխպուեր են Մայթա մնաղ պէտք եզամ նորոգութեան համար :

— Փաղըլ Մուսթաֆա փաշա 130 000 ֆրանքի արժողութեամբ ընծաներ գրկել է, իւր եղբոր դստեր, որոց ամուսնութեան հանդէսը կատարուեցաւ այս օրերս :

— Արսուի թէ գանձուց պաշտօնեայն ըստ ամանոյ՝ 8, և ըստ ումանոյ՝ 12 միլիան լիբրայի նոր փոխառութիւն մ'է

ըրեր փարիզէն, և թէ՛ այս ստակը պիտի յատկանայ գանաղխանէի դրամագլխէն տարուէ տարի արուելիք բաժնին :

— Եգիպտոսի իշխանութեան զինւորական հրամանատարներէն մէկ քոնի հօգի փարիզ երթալով, Գազդիոյ զինուորական ընթացքը աչքէ պիտի անցունեն եղեր :

— Երէկ առաւօտ մայրաքաղաքիս մէջ չորս տեղ հրդեհ պատահեցաւ : Ժամը 11 ին ատենները Բումէլի—հիւսար՝ ուր 30—40 տուն այրել է, մեծ մասը հայ : Ժամը 12 ին ատենները Պօլիս Սըրմաքէշ խանի ետեւը, ուր միւշն Մըրլըլը Յաղլը փաշային ընդարձակ ապարանքը այրել է : Իսկ միւս երկուքը Ղալաթիա տեղի ունեցան, իսկա թեթեւ վնաս սպասուած ելով :

Փարիզէն լուր կուտան թէ Նիէլ մարաշախտը օրէնադիր ժողովոյն մէջ յայտներ է թէ այն զինուորները որոնք կրկին իրենց գունդերը դառնարու համար հրաման ստացած էին, քննութենէ մը յետոյ կրկին պիտի արձակուին :

— Սպանիոյ կառավարութիւնը փարիզի սեղանաորաց հետ կրանակցի, 10 միլիոն անդղիական ոսկիի փոխառութեան մը համար :

— Նարոլէան կայսրը ներքին գործոց պաշտօնէին նամակէմը գրեթէ եղեր, որով կառավարիչ Նարոլէան առաջինի ծննդեան 100րդ տարեդարձը տօնել, և ակտութեան ծեր զինւորաց վիճակը բարուքել՝ օգոստոս 16էն սկսեալ տարին 230 ֆր. թոշակ տալով :



—Վի՛ննական լրացրի մը նայե-  
լով Գաղղիտ առաջարկած ըլլալու է  
Աստրիոյ և Իտալիոյ որպէս զի Հռով-  
մոյ մէջ եկեղեցական ժողովը գու-  
մարուած ատեն հոն ձմեռանոցի մը  
մէջ զօրք գնելու համար Պապին ա-  
ռաջարկու թիւն ընեն : Կրտսի թէ  
յիշեալ երեք տէրութիւնները պիտի  
համաձայնին այս առաջարկութիւնը  
գործադրել տալու :

—Նարոյէան կայսրը հրաման ըրեր  
է որ 20000 Ֆրանկ տարեկան թո-  
շակ տրուի հանգուցեալ Պ. Թօրլօնիկի  
կողակցին :

—Ինչեւրպէս ըլի լրացրին գրա-  
ծին նայելով, Գրօնշլթաւ ծովային ու-  
ցամաքային զօրաց մէջ մեծ կուլ մը  
եղեր և 4000էն աւելի անձինք այս  
կուսոյն մասնակցեր են : Արդիւլքու  
համար միջամտող հրամանատարք ծեծ  
կերեր են, և վերջապէս 6 մեռեալ  
ու շատ մը վերաւորեալ ձգելէն յե-  
տայ զատուեր են իրարմէ :

—Մտոյդ տեղեկութիւններով կը  
հաստատուի թէ՛ Ռուսիոյ մէջ օղիին  
գործածութիւնը շատ աւելցած է :  
Անցեալ տարի Ռուսիոյ մէջ զինովու-  
թեան պատճառաւ մեռնողներուն  
թիւը 2748ի հասեր է, որ օրը 7ական  
հոգի ըսել է : Մոսկուայի մէջ զինու-  
վութեան պատճառաւ բանտարկեալ-  
ներուն թիւը մինչև 21794ի բարձրա-  
ցեր է 1863ին, մինչդեռ 1842ին 7224  
է եղեր :

—Լմաննի մէջ իդական սեռէն  
տնանք սակրչութեան արհեստը սով-  
րելու սկսեր են :

—Լմաննի մէջ և Անդղիոյ ուրիշ  
կղզերը ստորագրութիւն բացուելով  
բաւական ստակ ժողովուրդ և Անդղիոյ

գլխաւոր պաշտօնէին ընծայուեր է :  
Պաշտօնեայն իւր շնորհակալութիւնը  
յայտնելէն յետոյ, ընծայեալ գու-  
մարով հասարակաց համար մեծ հի-  
ւանդանոց մը կառուցանել սկսեր է :

—Ճարնէն Փարիզ՝ Լմանն և Բե-  
զերապուրի ուսման համար զրկուած  
խել մը անձինք ետ պիտի ճամբուին  
եղեր, ուսման սէր չունենալուն և  
պարսոյ բաներով ժամանակ անցու-  
նելու ետեէ ըլլալուն համար :

20 տարի առաջ Պերթրան անունով  
անձ մը Փարիզու գերեզմանատանց մէջ  
անլուր եղեանագործութիւն մը կը գործէ ե-  
ղեր, գերեզմաններէ ձեռքովը դուրս հա-  
նած կանանց զիակներու վրայ : Այս ան-  
ձը վերջը բոնուելով պատժուեր է : Վեր-  
ջին օրերս կլսեմք թէ այս անձը իրեն հե-  
տեւող մը ունեցեր է : Մարտ 29ին գե-  
րեզմանատան մը պահապանը կտեսնէ որ  
երեք նոյն մեռեալ իրենց գերեզմանէն  
գուրս հանուած են, որոնցմէ մէկը կնոջ  
զիակ էր, եւ միւսները՝ արանց : Անօր-  
ջապէս տեղական ոստիկանութեան կի-  
մացնէ եղելութիւնը, որ կիտլթայ բժըշ-  
կի հեա քննել : Այս քննութեամբ կհաս-  
կըցուի թէ անձանօթ շարագործը կնոջ  
զիակին վրայ եպերելի շարագործութիւն  
մը ի գործ դրած է, ինչպէս որ վրան տեռ-  
նուած նշանը իսկ կյայտնէր : Ոստիկա-  
նութիւնը այժմ ետեւ է է այս գերեզմա-  
նակրկիտ եղեանագործը ձեռք ձգելու :

—Տխուր դէպք մը կկարդամք եւրո-  
պական լրագրաց մէջ : Անցեալ ամսոյն  
վերջերը 21 որմնագիր ձիւնապատ լերան  
մը ստորոտէն անցած ատեննին, ձեան  
կոյտ մը լեռնէն վար իյնալով կթաղէ այս  
գործաւորն ըր, որոնցմէ եօթը հոգի մի-  
այն կազատին որքան որ շուա օգնու-  
թիւն ալ կըլլայ : Ձեան կոյտը կոյտանայ  
հովի կամ ուրիշ գանալան պատճառաւ,



ձեան մը Կոթրիկ մտէ մը որ լերան գա-  
գաթէն փրթելով ճամբան գլոցած ատեն  
իրեն մտա գտնուող ձեան շամանգադնե-  
րու հետ կոմիանայ եւ մեծ դանդուած մը  
կիպովէ : Որչափ բարձր ըլլայ լեռը , այն-  
չափ ալ կոյտը մեծ կըլլայ , եւ վասնզը  
ահաւոր :

— Կէտիկ — փաշայի Հայ կին մը որ  
յղի ըլլալով վրան յգութեան պատ-  
ճառու խելքի հիւանդութիւն մէկայ  
եղեր , առտու մը կանուխ Գոււզա-  
փուի նաւանատոյցը կերթայ եւ հոն  
ինքզինքը ծովը կնեակէ : Բարեբաղ-  
գարար երկու նաւավար անանելով ,  
ծովէն ողջ կազատեն :

— Շերամի հին հունար նոր հուն-  
աէն սրոշելու մէկ նոր եղանակը դը-  
տած է բրուսիացի մը , զոր արժան կը  
համարվուք մեր Հայ շերամատածնե-  
րուն քննութեանը ենթարկել : Սյս  
եղանակը հետեւեալ կերպով կիատար  
ուի : Քիչ մը հունտ սաք ջրի մէջ պէտք  
է ձգել . երբ հունտը իւր բնական  
գոյնը , այն է մութ շէշիկ գոյնը առ-  
նէ՝ նշան է թէ հունտը իր մէջը խառ-  
նուրդ չունի եւ ազէկ է : Իսկ եթէ  
մութ գեղին , կանանչ , եւ բաց գե-  
ղին գոյն առնէ , նշան է թէ հունտը  
խառնուած է հին եւ նոր սեւտակնե-  
րով : Բրուսիացին այս եղանակը քա-  
նի մը անդամ փորձած ըլլալով բազ-  
մութեան առջև , կխոստովանի թէ  
մեծ ճատամբ հին հունտը նորին հետ  
խառնուելէն շատ գէշ հետեանք ա-  
ռաջ եկած են . և ստով շերամատա-  
ծութիւնը շատ կնեւած է վերջին տա-  
րիներուս մէջ , ինչպէս որ տարացի շե-  
րամատածները կհաստատեն :

Կէտիկի փաշայի Օմանիէ թատրոն

նին մէջ վաղ գիշեր ժամը Չուկէսին  
արտաքայ կարգի վառու որ ներկա-  
յացում մը պիտի արուի , ինչպետ  
Օրիորդ Ե . Գարաղաշեանի առաջին  
դերասանուհւոյն յիշեալ թատրոնին :

«Պաղայոյցի մը կենացը երեսուն  
տարին» երեք արարուած եւ վեց  
պատկերով սքանչելի եւ բարոյակից  
թատրերգութենէն զատ , «Բօզմն  
տա» կամ «Վանգարաից բռնաւորը»  
մէկ արարուածով սղերգութիւնը  
պիտի ներկայացուի , որ խիտ նշա-  
նաւոր եղած եւ մինչեւ նարոյէն  
կայտեր առջեւ ներկայացուած է :

Ի վերջոյ օրիորդ Վ . Գարաղաշ-  
եան «Հրաժեշտ քաջասիրտ գինու-  
րին» առկերգութիւնը պիտի արտա-  
սանէ :

Շատ կիսովաքիւնք որ բոլոր թա-  
տերասէր ազգայինք բարեհաճին ներ-  
կայ գանուիլ այս ներկայացումն , որ  
օգտակար է , եւ դոյացած արդ ին-  
քը Օրիորդ Ե . Գարաղաշեանի պիտի  
յատկանոյ : Սն արժանի է քաջակե-  
րութեան եւ փարձատրութեան , քիչ  
ժամանակի մէջ իւր ցուցած յաջար-  
կութեան համար . եւ իւր ջանքերն  
յոյս կուտան թէ աւելի եւս պիտի  
յառաջագիմէ թատերական ասպա-  
րէզին մէջ :

Կէտիկ փաշայի մէջ արուած թա-  
տերախաղերուն ներկայ գտնուելու  
համար մեծ ծախքեր պէտք չեն ,  
ինչպէս պէտք է Բերա երթալու հա-  
մար :

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԵՐ  
Հ . Ս . ԱԼԱՆԱՅԵԱՆ

ԵՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ . Յ . ԳԵՐԵՃԵՆԷՆ